

Կ Ա Ր Ծ Ի Ք

ԱՆԻ ԴԱՎԻԹԻ ԱԲՐԱՀԱՍՅԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՆԳԼԻԱՅԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ» ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Բարձրագույն կրթական համակարգում իրականացվող բազմախոսումների և զարգացումների, համաշխարհային կրթական տարածքում ինտեգրվելու պայմաններում պահանջվում են տարբեր երկրների կրթության համակարգերի, նրանցում ընթացող գործընթացների վերաբերյալ ուսումնասիրություններ, անընդհատ վերլուծություններ: Անառարկելի է, որ ՀՀ բարձրագույն կրթության համակարգը մշտապես կատարելագործվելու կարիք ունի. ունենալ զարգացած կրթական համակարգ, նշանակում է ունենալ զարգացած գիտության ոլորտներ, որակյալ կրթություն, որակյալ կադրեր, մասնագետներ, զարգացած տնտեսություն և այլն: Այս տեսանկյուններից մշտապես արժևորվում է բարձրագույն կրթության դերն ու նշանակությունը, որն ապահովում է պետության կայուն և առաջանցիկ զարգացումը, մարդու մտավոր և սոցիալական զարգացման գործընթացը, հասարակությունում նրա սոցիալական ակտիվությունը: Այո, այսօր բարձրագույն կրթության կառավարման համակարգում նոր գիտական գաղափարների, մոտեցումների, սկզբունքների մշակման և դրանց կիրառման անհրաժեշտություն կա, որոնք անհապաղ լուծում պահանջող կարևոր խնդիրներ են, և որոնք կարող են լուծվել նաև տարբեր երկրների բուհական համակարգի ճանաչման և առաջավոր փորձի փոխանակման արդյունքում:

Ատենախոսական աշխատանքը նվիրված է Հայաստանի և Անգլիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման համեմատական վերլուծությանը, որտեղ առաջադրվել են մի շարք կարևոր խնդիրներ. երկու երկրների կրթական քաղաքականության ուսումնասիրությունը բարձրագույն կրթության ոլորտում, այդ երկրների բարձրագույն կրթության համակարգերի օրենսդրական ուսումնասիրություն, ֆինանսական համակարգերի վերլուծություն, բարձրագույն կրթության գործընթացների վերլուծություն, համեմատական

վերլուծությունների իրականացում՝ Հայաստանի և Անգլիայի բարձրագույն կրթության համակարգերի առանձնահատկությունների ուսումնասիրություն, ընդհանրությունների և տարբերությունների վեր հանում, Անգլիայի առաջավոր փորձի ուսումնասիրության հիման վրա ՀՀ-ի համար բարձրագույն կրթության համակարգի կառավարման նոր մեխանիզմների մշակում: Այս ամենի արդյունքում բացահայտվում է առավել արդյունավետ, զարգացած կրթական համակարգի կառավարման ընթացքը, որն ուղղված է ապագային, իհարկե ելակետ ունենալով երկու երկրների ներկա և անցյալ բարձրագույն կրթական համակարգերի կառավարման առանձնահատկությունների խորը ուսումնասիրություններն ու վերլուծությունները:

Ներածության մեջ հեղինակը ներկայացրել է հետազոտական ապարատի քաղաքատարրերը, որոնք փոխկապված և փոխապայմանավորված են:

Ատենախոսության առաջին գլուխը, որը կրում է «Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգի կառավարումը» խորագիրը, կազմված է վեց ենթագլխից, որտեղ մանրամասնորեն ներկայացվում են Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգի նպատակը, ինդիքները, կառուցվածքը, կրթական քաղաքականությունը և օրենսդրական դաշտը: Գնահատելի է, որ ատենախոսը մանրամասնորեն ուսումնասիրում է բարձրագույն կրթության համակարգի ֆինանսավորման գործընթացը ՀՀ-ում և անում այն կարևոր մեկնաբանությունը, որ «կրթության ոլորտում ֆինանսներն ու որակը փոխկապված են, քանի որ մրցունակ ու որակյալ կրթություն առանց ֆինանսական ներդրումների հնարավոր չէ»: Այս ենթագլխում կան ուշագրավ վերլուծություններ, աղյուսակներ, Աթենա նախագծի վերաբերյալ ուսումնասիրություններ, որոնք ամբողջացնում են բուհական համակարգի մասին մեր պատկերացումները: Այս գլխում հեղինակն իրավացիորեն անդրադառնում է Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգի կառավարման առանձնահատկությունների հարցի քննարկմանը, որտեղ ներկայացված է հարուստ տեղեկատվություն ներբուհական կառավարման, բուհերի ընդունելության համակարգի մասին: Հեղինակն անդրադառնում է նաև Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության

համակարգում որակի ապահովման գործընթացին, ուսումնասիրում բարեփոխումները, ինտեգրացիոն և ինովացիոն գործընթացները:

Ատենախոսության երկրորդ՝ «Անզլիայի բարձրագույն կրթության համակարգի կառավարումը» խորագիրը, կազմված է վեց ենթազլխից, որտեղ հեղինակն անդրադառնում է այն հարցերին ու խնդիրներին, որոնք ուսումնասիրվել են Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգի կառավարման տեսանկյունից: Բավականաչափ ծավալուն ուսումնասիրվել են Անզլիայի բարձրագույն կրթության համակարգի նպատակը, խնդիրները, կառուցվածքը, որակավորումների շրջանակը, կրթական քաղաքականությունը և օրենսդրական դաշտը, ֆինանսավորման հարցերը: Ատենախոսը տարբեր տեսանկյուններից ուսումնասիրել և վերլուծել է Անզլիայի բարձրագույն կրթության համակարգի կառավարման առանձնահատկությունները, որոնց վերաբերյալ տրվում են փաստարկված բացատրություններ: Ուշագրավ տեղեկատվություն և պարզաբանումներ կան որակի ապահովման հարցերի հետ կապված ուսումնասիրություններում, մասնավորապես՝ գնահատումներին վերաբերող եզրակացությունները և այլն: Այս գլխում ներկայացված է Անզլիայի բարձրագույն կրթության համակարգի բարեփոխումները, ընթացող ինտեգրացիոն և ինովացիոն գործընթացները:

Ատենախոսության երրորդ գլխում, որը կրում է «Բարձրագույն կրթության համակարգերի կառավարման առանձնահատկությունները Հայաստանում և Անզլիայում» խորագիրը, հեղինակը բացահայտում է Հայաստանի և Անզլիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման նմանությունները, համակարգում դրանք և հանգում այն եզրակացության, որ արձանագրված նմանությունները հիմնականում պայմանավորված են Բոլոնյան գործընթացի պարտադիր պահանջներով: Բացահայտված են նաև տարբերությունները, որոնք համակարգված և համակողմանի ուսումնասիրության արդյունքում են արձանագրվել: Նշենք, որ նմանություններն ու տարբերությունները ներկայացված են աղյուսակի տեսքով, որտեղ առանձնացված են այն կարևորը, էականն ու բնորոշը, որոնք վերաբերում են և բնութագրական են հիմնախնդրի ուսումնասիրության բովանդակությանը: Կատարված ուսումնասիրությունների, վերլուծությունների

արդյունքում հեղինակի կողմից մշակվում են բարձրագույն կրթության համակարգի ինստիտուցիոնալ և համակարգային կառավարման մեխանիզմների առաջարկներ, որոնք գիտատեսականորեն հիմնավորված են, դրանք կարելի է կիրառել ՀՀ բարձրագույն կրթության համակարգի կառավարման գործընթացում:

Ատենախոսությունն ավարտվում է եզրակացություններով, որտեղ ամփոփված են գիտամանկավարժական հետազոտության արդյունքները, որոնք հիմնավորված են և արժանահավատ:

Ներկայացված գրականության ցանկն օգտագործված է աշխատանքում:

Անի Դավիթի Աբրահամյանի «Հայաստանի և Անգլիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման համեմատական վերլուծություն» թեմայով ատենախոսությունը պարունակում է գիտական նոր գաղափարներ ու մոտեցումներ, բավականաչափ ուշագրավ մեխանիզմների կիրառման առաջարկներ, որոնք բարձրագույն կրթության կառավարման համակարգում առկա հիմնախնդիրներին նոր լուծումներ են առաջադրում: Ատենախոսությունը գիտամանկավարժական կուրս հետազոտական աշխատանք է, և էական նշանակություն ունի կառավարման համակարգի բարելավման, ոլորտի հետագա զարգացման համար:

Ներկայացնենք որոշ դիտարկումներ ատենախոսության վերաբերյալ.

1. Ատենախոսության գլուխները կարելի էր ավարտել ամփոփումներով:
2. Ատենախոսության վերջին գլխում ներկայացված են բարձրագույն կրթության համակարգի կառավարման նոր մեխանիզմներ, որոնցից մեկին կամ մի քանիսին կարելի էր անդրադառնալ իրականացման ընթացքում հանդիպող հնարավոր դժվարությունների տեսանկյունից:
3. Աշխատանքում կան որոշ լեզվաոճական անհարթություններ, մտքերի կրկնություններ:
4. Կան որոշ տեխնիկական վրիպակներ:

Վերոնշյալ դիտարկումներն ամեննին չեն ստվերում աշխատանքի գիտական արժեքը:

Անի Դավիթի Աբրահամյանի «Հայաստանի և Անգլիայի բարձրագույն կրթության համակարգերի կառավարման համեմատական վերլուծություն» խորագրով ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ

մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման թեկնածուական ատենախոսությունը բավարարում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կարգի 7-րդ կետի պահանջները, իսկ ատենախոսն արժանի է իր հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝  Լ. Ն. Ղուկասյան
մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ

Լ. Ղուկասյանի ստորագրությունը

Հաստատում եմ՝

Շիրակի պետական համալսարանի

գիտական քարտուղար



Կ. Պետրոսյան

24.10.2022թ.